Չ ՅՈՒՆՎԱՐ — № 2 — 1888

ՀՆՉԱԿ

ԲՌՆԱՏԻՐՈՒԹԻՒՆ
ՀԱՐՈՒՍՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱՒՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ
ԵՒ
ՄԻՋՈՑՆԵՐ

Ա.

Որո՞նք են բռնապետական, միապետական ռէժիմի յատ-կութիւնները: Բռնապետական ռէժիմ անուան-ւում է, այնպիսի ռէժիմը, որտեղ տիրում է գործում, մի-[illegible] Այսինքն [illegible] [illegible], որ միահեծանական [illegible] է թէ քաղաքական [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] կանոնաւոր [illegible] [illegible] եւ [illegible] [illegible] Հասարակ [illegible] իրենց [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ընդհանրութեանը: Այսպիսի ռէժիմում [illegible] [illegible] է ազատութեան [illegible] [illegible] [illegible] կամք [illegible] կամքը [illegible] է [illegible] ընդհանրութեան կամքի, [illegible] ընդհանրութեան կամ-քը [illegible] է իր [illegible] [illegible] բարձրագոյն կամքի առջեւ: Այդ [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] ընդհանրութիւնն իրենց գործողութիւնների մէջ [illegible] է [illegible], [illegible] [illegible] թէ իրենց, այլ բարձրագոյն կամքի [illegible] Այդ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ու [illegible] բխնում է [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ընդհանրութիւնն [illegible] [illegible] [illegible] գործողութիւններ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] գործողութիւններ Այսպիսով, [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ընդհանրութեան [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ղեկավարում է բարձրագոյն կառավարութիւնը, որի ան-[illegible] [illegible] պաշտպանում է այդ [illegible]: [illegible] բարձրագոյն կառավարութիւնը, որը կարգադրում է ան-Հատի եւ ընդհանրութեան կեանքը իր կամքի համեմատ:

Երթանք առաջ:

[illegible] բռնապետական ռէժիմի տակ ժողովուրդը Հանդիսանում է նորա ձեռքերի մէջ միայն [illegible] կամ [illegible] [illegible] ուղղութիւն, [illegible] [illegible], որն այնպէս կամ այնպէս Համակրում է բռնապետութեան ներկայացուցիչներին եւ [illegible] նորանց զօրութեան, [illegible] [illegible] կառավարութեան կողմից [illegible], [illegible] [illegible] [illegible] է: Բռնապետական կառավարու-թիւնը, [illegible] որ նա չէ կարող [illegible] [illegible] [illegible] իրեն [illegible], [illegible] է ընդհանրութեանը [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] մէջ: Այսպի-[illegible] ընդհանրութեան [illegible] [illegible] [illegible] է բռնա-պետական ռէժիմի [illegible] [illegible] [illegible] մէջ: [illegible] [illegible] [illegible] [illegible] բռնապետական ռէ-ժիմի [illegible] [illegible] [illegible] [illegible] է որ [illegible] [illegible] [illegible] որ այդ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] է կառավարութեանը բռնապետական [illegible] ու [illegible] [illegible] [illegible] կողմից [illegible] ժողովրդային ընդհանրութիւնը [illegible] է [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] կառավարութեան կողմից [illegible] [illegible] [illegible], [illegible] այդ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible] [illegible] պահանջների համար: [illegible] իրեն [illegible] [illegible], պահանջները բռնապետական կառավարու-թիւնն [illegible] [illegible] է [illegible], [illegible] [illegible] [illegible] նա [illegible] է [illegible] իր [illegible]:

Այսպէս՝ բռնապետական ռէժիմի տակ [illegible] [illegible] կառավարութեան [illegible] [illegible] [illegible] [illegible] միջոցով ու [illegible] [illegible] կողմից, [illegible], [illegible] [illegible] է կառավարութեան [illegible] [illegible], [illegible], [illegible]:

Բռնապետական կառավարութեան օրինակներ [illegible] [illegible], [illegible], [illegible]:

Այսպիսի [illegible] [illegible] [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Այսօր [illegible] [illegible] [illegible] [illegible] է.

Բ

Մենք խօսեցինք բռնապետութեան մասին գլխաւորապէս բացատրելու համար այն կառավարութիւնների բնաւորութիւնը, որ այսօր հայ ազգի տէրերն են։ Խօսելով այդ նիւթի մասին, մենք առաւել պարզած կլինենք մեր յետագայ գաղափարութիւնները և առաւել նկատելի կդարձնենք այն ահագին հակապատկերը, որ գոյութիւն ունի ռուս, թիւրք ու պարսիկ րէժիմների և այն հասարակական կազմակերպութեան պայմանների մէջ, որոնց մենք համոզուելով համարում ենք իբրև հարկաւորութիւն որպէս հայ ազգի, նոյնպէս ընդհանուր մարդկութեան զարգացման համար։ Այն հասարակական կազմակերպութեան պայմանների վրայ կլինի մեր համառօտ խօսքը, որ և մենք կնշանակենք առանձին կէտերով։

ա) Ինչպէս անհատը, նոյնպէս մի ժողովուրդ, նոյնպէս և ընդհանուր մարդկութիւնը բնածին պահանջներ ունեն իրենց բարոյական, մտաւոր ու ֆիզիկական կեանքի զարգացման համար։ Այդ զարգացումը պահանջում է ազատութիւն, որը ճանապարհ և գլխաւորապէս իր ազատութեան համար բարեյաջող պայմաններ և լայն սահմանէ։ Անհատի, կամ մի ժողովրդի և կամ ընդհանուր մարդկութեան ազատ զարգացման համար իբրև հաստատ հիմք ծառայում են նրա զգացմունքները, նրա համոզմունքները, նրա խղճմտանքը, նրա կամքը։ Եւ այդ պատճառով անհատի, կամ մի ժողովրդի և կամ ողջ մարդկութեան զգացմունքները, համոզմունքները, խղճմտանքը, կամքը պէտք է բարեյաջող պայմաններ ունենան իրենց ազատ արտայայտութեան համար։ Որպէս գործողութեան մէջ, նոյնպէս և խօսքում անհատը, կամ ժողովուրդը և կամ ողջ մարդկութիւնն իրենց առաջնորդ են ունենում այդ յատկութիւնները, որոնք, կրկնում ենք, պիտի մի և նոյն ժամանակ անպատճառ ունենան բարեյաջող պայմաններ իրենց ազատ ու անընդհատելի արտայայտութիւնների համար։ Իսկ այդ բարեյաջող պայմանները մի ժողովրդի ազատ զարգացման համար կարող է տալ այնպիսի հասարակական կազմակերպութիւն, որն ընդունած լինի իրեն հիմք, սկզբունք ու օրէնք նոյն իրեն ժողովրդի զգացմունքները, ցանկութիւնները, հակումները, ձգտումները, համոզմունքները, խղճմտանքն ու կամքը։ Այդպիսով ժողովուրդն ինքն է յայտնվում իր տէրը և իր ղեկավարը։

բ) Իւրաքանչիւր մարդու բնական ու անհերքելի իրաւունքներն են՝ ունենալ միջոցներ պահպանելու իր գոյութիւնը և ազատութիւնը։ Իւրաքանչիւր անհատի համար ազատութիւնը յայտնվում է իբրև անհրաժեշտ պայման՝ իր կամքի համեմատ՝ սեփական բոլոր կարողութիւնների զարգացման ու գործածութեան համար։

գ) Բարոյական, մտաւոր ու ֆիզիկական ուժերի, ընդունակութիւնների ու կարողութիւնների կեանքում ու լիակատար զարգացման ձգտել — բնական նպատակն ու պարտականութիւնն է իւրաքանչիւր մարդու։ Դրա համար, ամենահարկաւոր պայմաններից մէկն է՝ իւրաքանչիւր անձի կրթութիւնը․ այսինքն ամէն-մէկ անձ պարտաւոր է ուսանել մինչև մի յայտնի՝ օրէնքով նշանակված՝ տարեկանը։

դ) Աշխատաւոր բոլոր երկրների ներկայ հասարակական կազմակերպութիւնը, առաւել կամ պակաս զանազանութեամբ, առաւել կամ պակաս զօրութեամբ, առիթ է մշտական պատերազմի անհատական ինտէրէսի (intèret) և հասարակական ինտէրէսի մէջ, անհատական ձգտումների հակառակ հասարակական ձգտումներին։ Նոյնացնել անհատական ինտէրէսները, ձգտումները հասարակական ինտէրէսների, ձգտումների հետ — դա պէտք է լինի վերյիշած պատերազմի բուն խնդրի լուծումը։ Հասարակական կազմակերպութեան այնպիսի պայմաններ պիտի լինեն, որ անհատական պահանջները լիապէս բաւականութիւն ստանալով, անհատն իր իսկական ինտէրէսը տեսնէ հասարակական ինտէրէսի մէջ և այդպիսով նպաստէ նոյն հասարակական ինտէրէսի ծաղկման և պահպանէ հասարակական ընդհանուր կազմակերպութիւնը։

ե) Այն հանգամանքներում, որ հիմա ապրում է մարդկութիւնը, արդիւնաբերողը, առաւել կամ պակաս զօրութեամբ, հանդիսանում է գործիք այն անձերի ձեռին, որոնք կամ իրենց հասարակական դիրքով, կամ նիւթական կարողութեան առաւելութեամբ և այլն . . . աւելի բարձր են կանգնած նրանից, արդիւնաբերողից։ Արդիւնաբերողը յայտնվում է իբրև մի մասն այն ամբողջ մեքենայի, որով կառավարում է վերյիշած առաւելութիւն ունեցող անձը։ Դրանից մարդերի մէջ առաջանում է այն անհաւասարութիւնը և անարդարութիւնը, որով առանձնաշնորհված անձն իր անձնական ցանկութեան համեմատ և այն պայմանի շնորհիւ, որ արդիւնաբերողը նիւթական կախում ունի իրենից, գործածում, կարգադրում է արդիւնաբերողի մարդկային ֆիզիկական ուժերը, անուշադիր թողնելով այդ հանգամանքում նոյն իրեն արդիւնաբերողի կամքը։ Մարդկային ֆիզիկական ուժերի այդպիսի չափազանց գործածութիւնը, ըստ որում արդիւնաբերողի, այդ մարդկային ֆիզիկական ուժերի տիրոջ, բարեկեցութիւնը մոռացվում է, — այդ էքսպլուատացիան (exploitation) մարդկութեան մի մասին դարձնում է բանող ձեռ, բանող անասուն, իսկ միւս մասը յայտնվում է վայելող այդ բանող ձեռի արդիւնքով։ Արդիւնաբերողի և իր աշխատանքի այդ ճորտութիւնը գործարանական (fabrique) աշխարհում գտնում է իր արտայայտութեան ողջ փայլը։ Գործարանատէրը յայտնվում է վերյիշած առանձնաշնորհված անձը, իսկ գործարանական բանւորը — նրա գործիքը։ Գործարանատէրն էքսպլուատացիա է անում բանւորի մարդկային ֆիզիկական ուժերով, ըստ որում բանւորը նախ՝ նի-

թական կախումն ունենալով նրանից և երկրորդ՝ օրէնքով պաշտպանուած չլինելով, սպառնում է ամենաչնչին վարձապրութիւն տանելով իր բոլոր աշխատանքը յանձնել գործարանատիրոջը, որով և այս վերջինի սեփականութիւն է դառնում արդիւնաբերողական ուժի աշխատանքի բոլոր արդիւնքը և գործիքները։ Իսկ այն երկիրներում, ուր գործարանական սիստեմն այնքան զարգացած չէ, ինչպէս օրինակ Հայաստանում, համապատասխան վիճակի մէջ ենք տեսնում գիւղացիներին։ Այստեղ աշխատանքի գլխաւոր գործիքը յայտնվում է հողը, գործարանական բանւորի փոխարէն՝ գիւղացին, իսկ գործարանատիրոջը փոխարինում են կառավարութիւնը և կալուածատէրը, եթէ այսպիսին կայ։ Էքսպլուատացիայի գլխաւոր կերպն այստեղ հարկն է։ Նրա սաստիկ ծանրութեան ու անկանոնութեան շնորհիւ, որ կարգադրվում է կառավարութեան կողմից, գիւղացին իր սեփական հողը պահում է լոկ խօսքով, լոկ երևակայական կերպով (fictif), ինչպէս և այն աշխատանքի արդիւնքը, որ գիւղացին արտադրում է իր քրտինքով։ Բացի այն կողմնակի հարստահարութիւններից, որ կատարվում է Հայաստանում տէրունական պաշտօնեաների կողմից, բացի այն հանգամանքից, որ թիւրք կառավարութիւնը հալածելով հայ գիւղացուն ուժով զրկում է իր հողից և դարձնում այդ հողը այլացեղի սեփականութիւն, — բացի դրանցից, ասում ենք, ահագին տէրունական հարկերը դարձնում են կառավարութեան սեփականութիւն թէ գիւղացու գործիքը և թէ նրա աշխատանքի արդիւնքը։

Այժմ ամփոփենք մեր բոլոր ասածները, որոնց մենք կրկին կդառնանք «Հնչակի» յետագայ համարներում։

Պաշտպանել մարդկային բնական ու անհերքելի իրաւունքները, նպաստել իւրաքանչիւր անձի բոլոր ուժերի, ընդունակութիւնների ու կարողութիւնների լիակողմանի ու լիակատար զարգացման, ըստ որում անհրաժեշտ է իւրաքանչիւր անձի կրթութեան սիստեմի դրութիւնը, պահպանել ներդաշնակութիւն հասարակական համերաշխութեան և անհատականութեան մէջ (individualisme), դարձնել արդիւնաբերողի սեփականութիւն աշխատանքի գործիքները ու արդիւնքը, լինել ճշմարիտ արտայայտութիւն ժողովրդի կամքի, ըստ որում այդ կամքը պէտք է լինի օրէնքների հիմքը — ահա, ընդհանուր խօսքերով, պայմանները այն հասարակական կազմակերպութեան, որին հասնել պէտք է լինի հայ ազգի այն ուժերի պարտականութիւնը, որոնք իրենց նուիրած են հայ ժողովրդին վերածնութեան ու բարեկեցութեան հասնելու գործին։ Վերոյիշեալ պայմանների իրագործումով ժողովրդի լիակողմանի բարեկեցութիւնը կլինի ապահովված և ազատութիւն, հաւասարութիւն ու եղբայրութիւն նշանաբանը կդադարէ միայն լոկ փուչ ֆրազ։

Գ

Բայց նախքան մեզ, բոլոր հայերիս, աշխատել իրագործել Հայաստանում վերոյիշեալ հասարակական կազմակերպութիւնն իր պայմաններով, մեր առջև կան այլ խնդիրներ, որոնց լուծելուց յետոյ միայն կարողութիւն կունենանք աշխատել իրագործել վերոյիշեալ հասարակական կազմակերպութիւնը, որ այժմ մեզ համար իդէալ կամ հեռաւոր նպատակ է յայտնվում։ Այսօր մեր հանդէպ կան ուրիշ հանգամանքներ, որոնց մեր առաջին պարտականութիւնն ու քայլը պէտք է լինի հաշիւ տալ և որոնցից հաշիւ պահանջել։ Հայ ժողովրդի գոյութեան ապահովութեան տեսակէտից, այսինքն մարդկային ամենագլխաւոր իրաւունքի տեսակէտից, այդ խնդիրներն, այդ հանգամանքներն այսօր մեզ համար ամենաայրող հարցեր են ներկայանում։ Ի՞նչ պէտք է անել հայ ժողովրդային խեղճ ու անքող ահագին ընդհանրութեան գոյութիւնն ապահովելու համար. կամ թէ դնենք հարցն աւելի սուր կերպով և, դժբաղդաբար, իր աւելի ճշմարիտ գոյնով, — ինչ պէտք է անել առաջն առնելու համար հայ ժողովրդի քայքայմանը, որ շարունակ գաղթականութեան, կրօնափոխութեան, հարստահարութեան կերպերում ամփոփված. մեր աչքի առջև կատարվում է։ — ահա մի հարց, որ այսօր զբաղեցնում է և պէ՛տք է զբաղեցնէ հայերին։ Հայաստանցիների շարունակ պանդխտութեան, կրօնափոխութեան, հարստահարութեան գլխաւոր պատճառն է հայաստանցու տնտեսական անտանելի դրութիւնը և երկրորդ՝ այն սօցիալ-քաղաքական կազմակերպութիւնը, որ լիապէս զրկել Հայաստանցուն բոլոր մարդկային ու քաղաքացիական իրաւունքներից, նրան դարձրել է մէկ ինչ-որ համր մեքենայ, որ քանի նոր ու զօրեղ է՝ կծառայէ իր տիրոջ, մինչև որ տաժան աշխատանքից ու ժամանակից շուտով կհնանայ, կզրկվէ գործելու կարողութիւններից և այնուհետև կմնայ մի կողմ ժանգոտվելու համար։ Ուրեմն հայաստանցու տնտեսական դրութեան բարելաւութիւնը միայն կարող է վերջ տալ այն կամաց կատարուող, բայց հաստատ քայքայմանը, որին այսօր նա զոհ է։ Բայց այն քաղաքական անմխիթար ու կորստաբեր պայմանների ներկայութեամբ, որ գոյութիւն ունեն Հայաստանում, տնտեսական բարելաւութիւնը չէ կարող իրականանալ։ Մի ժողովրդի տնտեսական դրութիւնն ուղղակի կախում ունի նրա քաղաքական դրութիւնից։ Քաղաքական պայմանների անպէտքութիւնից սօցիալ-տնտեսական պայմանների ամբողջ սիստեմն էլ յայտնվում է անպէտք։ Վերջինի կատարելագործութեան համար պիտի կանխապէս կատարելագործվէ քաղաքական սիստեմը, որը և կտայ նրան նպատակայարմար պայմաններ։ Քաղաքական օրինաւոր պայմանները կարող են հայաստանցու սօցիալ-տնտեսական վիճակը բարելաւել և այդպի-

ռով նրան ազատել քայքայումից։ Քաղաքական պայմանները Հայաստանցուն պէտք է տան մարդկային ու քաղաքացիական իրաւունքներ, իբրեւ անհրաժեշտ պայմաններ նրա սօցիալ-տնտեսական դրութիւնը բարելաւելու համար։ Այդ իրաւունքները ոչ մի կ ի ս ա տ մ ի ջ ո ց ը չէ կարող տալ. այդ իրաւունքները կտայ քաղաքական ազատութիւնն իր քաղաքական ազատ հ ի մ ն ա ր կ ո ւ թ ի ւ ն ն ե ր ո վ.

Ուրեմն՝ յանուն հայ ժողովրդի, իբրեւ մարդկութեան մի մասի, լիակողմանի ու լիակատար զարգացման.

յանուն մարդկային ու քաղաքացիական իրաւունքների.

յանուն ժողովրդի տնտեսական բարեկեցութեան.

յանուն կրօնական համբերողութեան.

յանուն ապահովութեան բիւրաւոր հայ կեանքերի, որ հարուստ ոչնչանում են քաղաքական ու սօցիալ-տնտեսական ծանր հանգամանքների ու պայմանների ճորհով. եւ

յանուն վերջ տալու հարուստ անող գաղթականութեան, պանդխտութեան, որ արդիւնք է նոյն քաղաքական ու սօցիալ-տնտեսական անտանելի պայմանների.—

Մենք, հայերս, Թիւրքաց Հայաստանում պէտք է դիմենք մեր մօտակայ նպատակին, այն է՝ ձեռք բերենք քաղաքական ազատութիւն, իբրեւ անհրաժեշտ պայման վերոյիշեալ կէտերի իրագործման համար։

Դրանից յետոյ միւս բոլոր միւսներից, տրամաբանական կերպով առաջանում է ազգային ինքնուրոյնութեան, անկախութեան իրագործման պահանջը։

Քաղաքական ազատութեան եւ ազգային անկախութեան իրագործումից յետոյ՝ ազգային կառավարութեան ձեւն ու կերպը պէտք է լինի հետեւեալը.— 1) Մշտական ժողովրդական ներկայացուցչութիւն, Ազգային ժողով, որ կընտրուէ ազատ կերպով ընդհանուր քուէարկութեամբ, պատուէրներով հանդերձ քուէարկողների կողմից եւ որ կունենայ լիակատար իրաւունք օրէնսդրական բոլոր հարցերում, եւ 2) Նահանգական ընդարձակ ինքնավարութիւն։

Գ.

Այն կէտի մասին, որ բարելաւել Հայաստանցու դրութիւնը խաղաղ միջոցներով ցնորական միտք է, դատարկ է — մենք խօսել ենք «Հնչակի» առաջին համարում, պատեհ առթիւն դարձեալ կխօսենք դրա մասին, իսկ այս անգամ աւելի կարճ կերպով կրկնելով մեր դոյն համոզումը, մենք յետոյ կանգ կառնենք այն միակ միջոցի վրա, որ նախապէս յայտնել ենք «Հնչակի» նախնթաց համարում։

Արդեօք կարելի՞ է երազել խաղաղ ճանապարհով բարելաւել Հայաստանցու դրութիւնը, երբ կառավարութիւնը բոլորովին խուլ է եւ մինչեւ իսկ չէ ուզում լսել ժողովրդի ձայնը, երբ ժողովրդի ամէն տեսակ բնական ձգտումը՝ որ այսպէս կամ այնպէս համապատասխան չէ կառավարութեան դիտաւորութիւններին, ճնշւում են ծեծի, հարստահարութեան, բռնաւոր միջոցներով։ Արդեօք կարելի՞ է խաղաղ ճանապարհով վճռել այն սօցիալական հարցերը, որ ժողովրդի պահանջները դրել են օրուան խնդիրների կարգին, երբ ժողովուրդն իր ցանկութիւնների իրագործման համար զրկուած է ամէն տեսակ իրաւունքներից եւ միայն նոյն հարստահարիչները, յուզումներն են յայտնւում միակ արտայայտիչը նրա իղձերի ու պահանջների։ Արդեօք կարելի՞ է խաղաղ կերպով կառավարութեան առջեւ դնել ժողովրդական այրող խնդիրները, որ կեանքը ու ժամանակն են առաջացրել, երբ դրա պատասխանը կառավարութեան կողմից ոչ միայն կլինի ոչ, այլ կպատասխանէ անխիղճ հալածումներով եւ վայրենի ցեղերին գաղտնի կերպով կդրդէ կոտորելու ու աղքատացնել հայ ժողովրդին։ Արդեօք կարելի՞ է խաղաղ միջոցներով համոզել այն կէտին, որ Հայաստանցին պարտէ իբրեւ մարդ, երբ մինչեւ իսկ զոհ իր թշուառութեան վրայ արգելուած է։ Ոչ, կարելի չէ, կայ միայն մի միջոց այդ գիծի պարագայում գործադրելու, որ ժողովրդի ազատութիւնը մեզ ցոյց է տալիս։ Այդ միակ միջոցը — յեղափոխութիւնն է, ապստամբական միջոցներն են, որ ինչքան ընդարձակ ու լայն ասպարէզներ ունենան հայ ժողովրդի մէջ, նոյնքան նպատակայարմար կլինին։ Մնում է պէտս անել, որ այդ յեղափոխական, ապստամբական ոգին այնչափ զարգանայ հայ ժողովրդի մէջ, որ այս վերջինը կարողութիւն ունենայ այն ոգին գործով ապացուցանել։ Դրա համար, գ ի տ ա կ ց ա կ ա ն յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն տ ա ր ր ը, որ սկսում է գոյութիւն ունենալ եւ ձգտում առաւել ծաւալել հայ երիտասարդութեան մէջ, պէտք է հիմնէ մէկ ընդհանուր գաղտնի ու խիստ կարգապահ յեղափոխական կազմակերպութիւն*)։ Այդ գիտակցական յեղափոխական տարրը պիտի իրեն նշանակութիւն ունենայ՝ ժողովրդի հետ, ժողովրդի մէջ եւ ժողովրդի համար։ 1) Նրա գործունէութեան ասպարէզն է Թիւրքաց Հայաստանը։ 2) Նա պիտի վառէ եւ բորբոքէ խօսքի միջոցներով յեղափոխական պրօպագանդա անել հայ ժողովրդի եւ երիտասարդութեան մէջ։ 3) Նա պէտք է մտնէ Թիւրքաց Հայաստանի հայ ժողովրդի մէջ եւ նոյնպէս վերոյիշեալ միջոցներով տարածէ նրա մէջ ապստամբական ոգին եւ պատրաստէ այն հողը, որ անհրաժեշտ է ժողովրդական ապստամբութեան համար։ Բայց այդ պրօպագանդայի միջից գիտակցական յեղափոխական տարրի վրայ ընկնում է մէկ ուրիշ պարտականութիւն, որ համեմատաբար թեթեւ չէ, քան առաջինը. խօսքը, պրօպագանդան ժողովրդի մէջ, ունենալով հանդերձ իր մեծ նշանակութիւնը, բաւականաչափ ուժեղ չէ ինքը միայն տարածել ժողովրդի ընդհանրութեան մէջ յեղափոխական ոգին։ Այդ մէկ

*) Այդ կազմակերպութեան սկզբունքների ու կանոնագրութեան մասին մենք կխօսենք մէկ ուրիշ անգամ։

Ծ. Յ.

ուրիշ գործ, որ աւելի արմատական ու նպատակայարմար պրօպագանդա է ժողովրդային ընդհանրութեան համար։ Այդ գործն է — համարձակութիւնը, անձնուիրութիւնը, անձնազոհութեան ոգին, որ գիտակցական յեղափոխական տարրն անդադար պիտի ցոյց տայ։ Այդ գործը հասկանալի է ժողովրդին և անհամեմատ աւելի ընդունակ ներշնչելու ու վառ պահելու նրա մէջ ապստամբական ոգին։ Այդ գիտակցական յեղափոխական տարրը, որ բոլոր անձնականը զոհած կլինի ընդհանրութեան պատուի ու բաղդի համար, այդ տարրը, որին նախամեծարելի կլինի բանտն, աքսորն ու կախաղանը, քան մի գոյութիւն, որ հակառակ է սեփական սկզբունքներին, — այդ տարրը, որ փորձառութիւն կլինի, առաջինը պէտք է սկսէ պատերազմ թշնամու դէմ, և միայն այդ օրինակից յետոյ ժողովուրդը, ընդհանրութիւնը կարող կլինի բարձրացնել իր ապստամբական դրօշակը և զէնքը ձեռին, վեր կենալ ձեռք բերելու իր իրաւունքները։ Այդ պատերազմը, որ փորձառութիւնը կսկսէ առաջինը, կարող է ունենալ շատ միջոցներ, շատ եղանակներ ու կերպեր, երբեմն ընդհ., երբեմն մասն. նախաձեռնութեամբ, բայց որոնք միշտ պիտի ունենան ապստամբական ոգի կառավարութեան դէմ։ Օգուտ քաղել այն հանգամանքներից, երբ ժողովուրդն անբաւական է կառավարութեան որ և է կարգադրութիւնից, գլխաւորապէս ամեն տեսակ հարկահաւաքի ժամանակ. ոչնչացնել այն կառավարչական անձերին, որոնք վնասակար են ժողովրդի համար, ոչնչացնել լրտեսներին՝ դաւաճաններին և չդադարել նոր ու նոր ուժով շարունակել գործը որպէս զի միշտ արթուն մնայ ժողովրդի ուշադրութիւնը — ահա ընդհանուր խօսքերով, այն պատերազմը՝ որ փորձառութիւնը կանէ։ Առաջիններին կառավարութիւնը կջնջէ, դրանց տեղից կյայտնուեն նորերը և աւելի խիստ զօրութեամբ։ Այդ պատերազմի սկզբները գրեթէ անտարբեր մնացած՝ ժողովուրդը կամաց-կամաց կսկսէ համակրել յեղափոխական փորձառութեանը և ժամանակի շնորհով ինքն էլ համարձակութիւն կառնէ այն պատերազմին մասնակցելու։ Եւ երբ այդ ցանկութիւնը կսկսէ երևալ ժողովրդի մէջ, երբ այդպիսով հանգամանքների և գիտակցական յեղափոխական տարրի շնորհով յեղափոխական դրութիւն կստեղծվէ երկրում և ընդհանուր ուժերը բնական կերպով իրար հետ կմիանան — այդ օրը կլինի վաղուց ըղձած օրը, երբ համբերութիւնը կորցրած ժողովուրդը կկոտրատէ իր դարաւոր ստրկական շղթան, գոչելով „մահ թշնամուն“

Իսկ այսօր . . . Այսօր գիտակցական յեղափոխականը պէտք է երթայ Թիւրքա-Հայաստանի ժողովրդի մէջ,

---

ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԸ

Ծանր րոպէներ է կրում այժմ հայոց կեանքը։ Անորոշութիւն, ոչինչ մխիթարական, քաղց, աղքատութիւն և դրանց անմիջական հետևանքները՝ պանդխտութիւն ու կրօնափոխութիւն, — դա է ժողովրդի կեանքի պատկերը։ Տրտունջ, շփոթութիւն, չգիտնալ ինչ անել, անբաւականութիւն, — ահա հայերի այժմեան տրամադրութիւնը։ Եւ ե՞րբ կլինի այդ բոլորի վերջը..... Կարծես հայերը կախված են օդում, — ոչ ոտների տակ հաստատ հող ունեն, ոչ էլ կարողանում են ձեռներով բռնել որ և է բանից, որ վայր չընկնեն։ Երբեմն կպչում են այս-ինչ երևոյթից, տալով նրան մեծ նշանակութիւն, երբեմն այն-ինչ բանից, հաւատ են ընծայում և յոյսեր տածում զանազան գոյնզգոյն թէ՛ կառավարչական և թէ՛ ազգային անձնաւորութիւնների փքուն խօստումներին, — և այդ բոլորը ոչինչ դրական, ոչինչ արմատական չունի, այդ բոլորը նոյնպէս օդումն է, որպէս և իրենք հայերը, մինչդեռ իսկապէս մեծ նշանակութիւն ունեցող երևոյթները գրեթէ անուշադիր են մնացած ։ Բայց կարծում ենք ժամանակ է հայերին որոշել իրենց գործն ու անելիքը և ձեռք զարնել թարմ, կենդանի և մի և նոյն ժամանակ դրական միջոցների, որոնք, փոխարէն մեզ օդում պահելու, հասցնէին մեզի ցանկացած վերջնակէտին։ Ո՞ւր ենք մենք դիմում — յայտնի չէ։ Մի կողմից հայ ժողովրդի իսկական շահերը, ինտերեսներն անխնամ են մնացած, գրեթէ մոռացուած են և կամ շատ դանդաղութեամբ են զեկավարվում. Զէյթունի հրդեհն ու Կիլիկիայի աղքատութիւնն արագարար աճեցնում են պանդխտութեան ու կրօնափոխութեան երևոյթները։ Մինչդեռ միւս կողմից Յարութիւն պատրիարքի հրաժարականը և Մելքիսեդեկ եպիսկոպոսի արարքներն են յափշտակել հայերի բոլոր մըտքերը . . . և շատերը սպասում են, որ ոչ թէ առաջին, այլ այդ երկու վերջին երևոյթներն օրհասական նշանակութիւն կունենան հայ ժողովրդի բաղդի համար։ Յարութիւն պատրիարքը Թիւրք կառավարութեանը տուել է իր հրաժարականը և այս վերջինն աշխատում է իր պատասխանը որքան կարելի է աւելի ձգձգել, աւելի ուշացնել, հայերին թողնելով անիշխանական վիճակում։ Այդպիսով շփոթութիւնը տիրել է ամենքին և չգիտեն թէ Յարութիւն պատրիարքի հրաժարականի վրայ, հանդերձ իր փայլուն պատճառաբանութիւններով, ի՞նչպէս նայել և ինչ դիրք պահել կառավարութեան դիմաց։ Իրերի այդպիսի դրութեան մէջ առաջանում է Մելքիսեդեկի ընդեղ արարքը, որով նա ոչնչացնում է այն պաշտպանութիւնը սեփական ազգի ու եկեղեցու շահերի, որ հայերն այնպիսի ազդու կերպով ցոյց տուին Պէշիկթաշի գերեզմանատան գործում։ Մելքիսեդեկն, այդ ազգավնաս անձը, պաշտպանված իր սակաւաթիւ խաւարամիտ ու ստրուկ

որբանոցներով, իր այն պահքով, որ Զմիւռնիայի գերեզմանատան ոսկորները հրամայում է հանել և նրանց տեղը խանութներ շինել, ժամում է Թիւրք կառավարութեանը Պէշիկթաշի գործում ազգօգուտ գործող անձերին և պատժելով սաստիկ դատում Պէշիկթաշի գերեզմանատան խնդրի կրկին ծագմանը: Եւ Յարութիւն պատրիարքն ու Կրծոտեան փողոցին ունեցում են իրանց կերպով այդ անձինք [illegible] կառավարութեան տակ ամէնքով առաջնորդ մինչ [illegible]: Զրկել պաշտօնից — այս, դա անհրաժեշտ է, սակայն դրանով գործն ապարտան չէ համարում Թիւրք կառավարութիւնն օգուտ քաղելով Մելքիսեդեկի արարքից, հիմա իրաւունքով կարող է յարձակուել հայերի դէմ և անել այն բոլոր խառնակութիւնները, ճնշումները, [illegible] պէտք չէր համարձակուում: Աչքի այդ քանակութիւնների առաջն առնելու է ամէն և այդ կարելի է ոչ թէ զիջումներով ու կեղծաւորութիւններով, որ հիմա կրում է [illegible] կազմակերպութիւն, այլ գործերով, նոյն համարձակութեամբ, նոյն արդարացի յանդգնութեամբ կառավարութեան դէմ, որի գեղեցիկ օրինակը Պէշիկթաշի գործում մեզ ցոյց տուին անբողջ Կրծոտեան փողոցը՝ բացի պատրիարքից: Ազգային ժողովի մեծամասնութիւնը, իրենց [illegible] պահանջելով, [illegible]: Զանազան [illegible] [illegible] իրաւունքները [illegible] [illegible], որ կարող էր հայրենասէր ազգային գործիչ [illegible] է ամենայն Թիւրք կառավարութեան [illegible] [illegible], մեր [illegible] կրկին կառավարութեան մէջ:

Ազգային ժողովն այսպէս գոյութիւն ունի պատրիարքի [illegible] գրեթէ նոյնպէս անպատասխանատու է. նոյն ազգերով հայերի ամենախնդրական դրութիւնը քննելու բաւական է նրանց թերթերից: Ցեխոտի հերիւրածներ այն ճիշդ ժամանակ անհատապաշտութեան մէջ են և կրօնական պրօպագանդան նրանց մէջ ունում է հակայեղափոխականութիւն: Քաղաքականութեան համար ու [illegible] երբ [illegible] կերպարանք է ստանում, որպէս կրօնական պրօպագանդայի նոյնպէս պանդխտութեան պատճառ. Համար ազգային թէ ու խորհրդական և թէ [illegible] դժբախտութիւնների երկրի անձին ամենայն պատճառով [illegible] համախմբում: Իսկ Հայաստանի ազգը, ժողովուրդ [illegible] [illegible] համագումարների են տարածել այդպէս ժողովրդին: Տնտեսական [illegible] է կառավարութեան պայմանները, [illegible] [illegible] գործում իրենց [illegible] [illegible]: Անտարբերութիւնը թէ կրթված դասի և թէ ժողովրդային ընդհանրութեան մէջ [illegible] է: Տէրութեան աչքում կասկածաւոր հայերը [illegible] են և [illegible] ու հոգեւորական շրջանների մէջ [illegible] [illegible] կատարվում են: Չկայ պատրիարք, չկայ Ազգային ժողով, չկայ կանոն և ոչ մէկ ազգային գործիչ այժ, որ աշխատէր պատ_

չանելու հայ ժողովրդին այն տակարդ վիճակից, որից մինչև հօրինակ վրայ չ [illegible] [illegible] ներկայում:

Մինչդեռ մի կողմից Թիւրք կառավարութիւնը այժմ նոյն չէ դադարում հալածելու, ճնշելու հայերին, միւս կողմից նա արտաքին խաղ է խաղում Հայերը [illegible] [illegible] համար [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], և որոշ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] մի ֆիկտիւ (fictif) մեծոյ [illegible] թէ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible].

Մինչդեռ Թիւրքիայում [illegible] [illegible] [illegible], [illegible] կառավարութեան գաղտնի հրամանով [illegible] հայերի մէջ [illegible] [illegible] հայերի [illegible].

[illegible] [illegible], ոչ պատրիարքը, ոչ կաթողիկոսը, ոչ Ազգային ժողովը [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] տառապող հայրենիքի ու ժողովրդի վրայ մնացած անկեղծ հայերի սրտում: Այո, զօրութեան-անկում է նկատւում նոյն իսկ այն հայերի մէջ, որոնք առաջ շատ էին հաւատում ազգային առաջադիմութեանը: Եւ դա առաջ է գալիս այն անկման, այն լարված ու նեղ դրութիւնից,

[illegible]

... de haute trahison ... [illegible]

... Moniteur ... [illegible]

[illegible]

... 1884 ... [illegible]

... 1885 ... [illegible]

կողմից կառավարութեան դէմ, որով անպատուած Բրըգգալօվին ստիպում են հրաժարուել պաշտօնից և անում են հետեւեալ պահանջները. կանոնադրութեան փոփոխութիւնը, Ախիալովսկուն բաց դատաստանով քննելը. զինուորների և ուսանողների կռիւների ժամանակ սպանված ուսանողների մարմինները յանձնել ուսանողութեան ու թոյլ տալ որ նա նրանց թաղէ և ձերբակալված ընկերներին արձակել: Պրոֆէսօրներն անդադար ցոյց էին տալիս իրենց լիակատար համակրութիւնը դէպի ուսանողական շարժումները: Բայց ուսանողական ցոյցերի, ժողովների ժամանակ կառավարութեան հրամանով ոստիկանութիւնը, զինուորների ու կոզակների գնդերն անխնայ կերպով սուիններով, թրերով հարուածում են ուսանողներին, աշխատելով նրանց ցրվել: Իսկ դեկտ. 7-ին ուսանողական մի բուռն ցոյցի ժամանակ այդ վայրենի հալածումները հասնում են իրենց ծայրահեղութեան: Ոստիկանութիւնը զինուորները, կոզակները զէնքերով կատաղաբար յարձակվում են ուսանողների վրա և սկսվում է իսկական կոտորում: Աշխարհ տեսարաններ են տեղի ունենում և վերջը՝ 3 ուսանող սպանված, բաւական թւով ծանր վիրաւոր և շատերը թեթև կերպով վիրաւորված: Նոյնանման ուսանողական շարժումներ իրար ետևից տեղի են ունենում Կազանում, Օդէսսայում, Խարկովում, Ս. Պետերբուրգում: Մեծ քանակութեամբ ձերբակալութիւններ են կատարվում ուսանողների մէջ, որոնցից շատերին յետ են ուղարկում իրենց ծննդավայրերը, իսկ շատերով էլ զինուորական գնդերը լցնում...

Այդ անցքի առիթով Ժընեւից մեզ գրում են հետեւեալը. — „Ուսանողական յուզումները մեծ համակրութիւն գտան եւրոպական համալսարանների ռուսաստանցի ուսանողների մէջ: Ցիւրիխի, Փարիզի, Ժընեւի, Վիեննայի, Մօնպէլիէի ռուս լեհ ու կովկասցի ուսանողներն իւրաքանչիւր քաղաքից առանձին Ռուսաստանի ռուս ուսանողութեան ուղարկեցին ոգեւորված համակրական ուղերձներ, որոնք միւս կողմից սաստիկ կծու լեզու էին գործածում ռուս կառավարութեան դէմ: Իսկ Ժընեւում ռուսաստանցի ուսանողները կազմեցին Ժընեւի Palais Electoral-ի մէջ մի միտինգ (meeting), ուր 700-800 բազմութիւն կար: Խօսվեցան ճառեր, որոնք առանձին բրօշիւրով հրատարակվեցան, և միտինգն անցաւ աջող կերպով: Իբրև պատասխան այդ միտինգին, Ժընեւի վէյցարացի ուսանողներն իրենց կողմից կազմեցին մէկ այլ միտինգ, որ անցաւ շատ աշխոյժ կերպով: Խօսվեցան շատ ճառեր, համակրական — դէպի ռուսաստանցի ուսանողները և խիստ յարձակողական — դէպի ռուս կառավարութիւնը: Ռուսաստանցի ուսանողների այստեղ տուած միտինգը մեծ համակրութիւն գտաւ և բաւական աղմուկ պատճառեց եւրոպական մի յայտնի շրջանի մամուլի մէջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1887 Թ. (շարունակ.)

Միացեալ Ընկերութեանց Հայաստանի վարժարանների ընդ. տեսուչ Մկր. Յարբեան և փոխ-տեսուչ Մարկ. [illegible]անեան, որ ձերբակալուած էին դեռ ութսուն և վեց թ. հակառակ այն հանգամանքին, որ Կարինի դատաւորը նրանց անմեղ ճանաչեց, ութսուն և եօթ թ. մարտին աքսորուեցան. առաջինը գաղտնի կերպով փախաւ Գոնիա, իսկ երկրորդը՝ Բաղդադ:

Գարնան Մարտ. Չաճրկաչէմեան, որ բաւական ժամանակ արդէն Վանում բանտարկուած էր, աքսորուեցաւ Ադանա:

Գարնան Վանում բանտարկուեցան Կանափմանողեան եղբայրները և Մարխաս Մունետի եան:

Նոյնպէս գարնան Փոքր-Ասիայի Եւդոկիա քաղաքում բանտարկուեցան Գէորգ Փափազեան ու իր երկու քեռորդիները և Ստեփան Հայկունի:

Հոկտ. 23-ին Շատախ գիւղում ձերբակալուեցաւ Հ. Ար. Վ. Թոխմախեան, իբրև յեղափոխական քարոզիչ, բերուեցաւ Վան, ուր և բանտարկվեց: Նրա գործը դեռ քննուած չէ:

Դեկտ. 8-ին Հ. Ա. Թոխմախեանի գործով, իբր նրա դաշնակիցներ, ձերբակալված ու բանտարկված են Կ. Պոլսում հետեւեալ անձերը. Մկր. Թէրլէմէզեան (որ Վանից աքսորված էր Պոլիս), եղբայրներ Յ. և Գ. Խազուլեան, թէյավաճառներ, Թաշ Վարդան (Պոլսում Եալըլըզ խանի օտապաշի) և Յարութիւն Ադանեան (ծերունի):

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Մօնպէլիէ. — Մի խումբ երիտասարդներին. Շնորհակալութեամբ ստացանք 25 Փր.: Կուղարկենք ձեզ «Հնչակի» մէկ օրինակ:

Մօնպէլիէ. — Մ. Ընդունեցէք մեր շնորհակալութիւնները ձեր համակրութեան համար: Շնորհակալութեամբ ստացանք 6 Փր.: «Հնչակի» մէկ օրինակ կուղարկենք ձեզ, իսկ միւսը, որ մեր կարգադրութեան էք յանձնում, կուղարկվի Թիւրքաց Հայաստան:

Բրայիլա (Ռումանիա). — Պ. Ս. ստացանք: Կգրենք նամակ:

Կ. Պ. — X. Ընդունեցէք մեր շնորհակալութիւնները: Կուզէինք ձեզ նամակ գրել... Տարածեցէք: Խնդրում ենք շարունակել:

Նիւ-Եօրկ. — Թ. Շատ շնորհակալ ենք ձեր համակրական նամակի համար: «Հնչակի» առանձին համարի գինն է 50 ս. և ոչ թէ տարեկան... Կգրենք ձեզ նամակ:

Ն. Ա. — Z. Շատ ուրախ ենք: Կկատարենք ձեր ցանկութեան համեմատ:

Թ. — Հայի Զաւակ. Շնորհակալութեամբ ստացանք 10 րուբ.: Ձեր համակրական նամակը չէ կարող տպագրվել:

Մ. — Գ. Կարելի է գրել և ռուսաց փոստ. մարկաներ:

„Հնչակի“ No1 լոյս տեսաւ 1887 թ. դեկտեմբերին, մինչդեռ վրիպակով տպագրված էր նոյեմբեր:

„Հնչակի“ առանձին համարի գինն է 50 սանտիմ կամ 20 կոպ., բացի ճանապարհածախսից: Կարելի է ուղարկել փոստային մարկաներով:

Յօդուածներ, թղթակցութիւններ և տեղեկութիւններ ուղարկել հետեւեալ հասցէով.
Montpellier. (France). — M. Beniard. Poste restante (No25).
Իսկ դրամ ուղարկել.
Bale. (Suisse). — M. Daniel. Poste restante.

Լոնդոն. Հայկական ազատ տպարան